

դէն մեկնել է Էջմիածին:

Անշուշտ սրբազան հայրը վեհափառ Կաթողիկոսին պիտի ներկայացնէ ընդհանրապէս իր տառապեալ հօտի անմխթաբ վիճակը և դարման խնդրէ:

Յոյս ունենք, որ սրբազանը առիթից օգտվելով՝ չի մոռանայ մասնաւորապէս դարաւքցի բազմատանջ հայերին, որոնց վիճակին ինքը սրբազանը խիստ իրազեկ է:

Միբրա Մելիք. Սայիտադեան

Թաւրիզ, 2 յուլիսի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՏԱՏՐՈՒԹԻՒՆ» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Անկորեկե վարժուեց ևս նոր խարդախութիւններ

I

Ինքն իրան «Թիֆլիսի Յօրեկանական Թանձախումբ» անուանող ինքնակոչ յանձնաժողովը ուղարկեց մեզ տպելու «Մի կարևոր բացատրութիւն» անունով մի կոչ, կամ, աւելի ճիշդն ասել, խարդախված փաստերով մի յայտարարութիւն և մի անկորեկե արտայայտութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի վարժուեցի դէմ 400-ամեակի և 1500-ամեակի տօնման առիթով: Մենք մերժեցինք ընդունել և տպել: Այժմ այդ «կարևոր բացատրութիւնը», որ, վերջապէս, կը բանայ հայ հասարակութեան աչքը և ցոյց կը տայ, թէ փառասիրութիւնից և շահամոլութիւնից կուրացած մի խմբակ ինչեր անելու ընդունակ է, տպված է «Հօրիգօնի» № 147-ում:

Գտնելով այդ «Մի կարևոր բացատրութիւնը» խարդախված փաստական կողմից (և ուրիշ կերպ չէր կարող լինել), քանի որ նրա հեղինակ յանձնախմբի նախագահը պատմական փաստերը խարդախող (և՛օն է), նրա ոճը և բացատրութիւնները անկորեկե և առաքելութիւնները ոչ մի կրիտիկայի չը դիմացող, մենք ստիպված ենք մեր կողմից ևս բացատրութիւն տալ հայ հասարակութեան, պարզաբանել պորժի բոլոր հանգամանքը, ցոյց տալ կատարված խարդախութիւնները և ապա դիմելով նրան, հայ հասարակութեանը, խնդրել անկէտի (amketa, enquête) եղանակով արտայայտել իր կարծիքը:

Պատմենք պորժի էությունը:

Ինչպէս յայտնի է, դեռ անցեալ տարի և նոյնիսկ աւելի վաղ հարց արծարծվեց հայ մամուլի մէջ տօնել հայկական տպագրութեան 400-ամեակը: Այդ միտքը արտասահմանեան մամուլի մէջ աւելի վաղ արծարծվեց, քան մեր մէջ, և թիւրքահայ գրականագէտներից մինը՝ Ա. Ալպոյաճեան մի քանի բանասիրականներ նուիրեց հայկական տպագրութեան 400-ամեակի պատմութեան, որոնք տպվեցին Ամերիկայի «Կոնսակ» հանդէսի մէջ:

Անցեալ տարի, ձմեռը, երբ հրապարակի վրա գրվեց «Մշակի» 40-ամեայ յօրեկանը տօնելու հարցը, «Հօրիգօնը» իր ղեկավար Լէօի հետ, կամենալով խափանել այդ յօրեկանը, մէջտեղ նետեց տպագրութեան 400-ամեակը տօնելու հարցը և այնքան առաջ գնաց, որ աշխատեց նոյնիսկ նշանակել տալ այդ տօնախմբութիւնը այս տարվայ մայիս ամսին, այսինքն այն ամսին, երբ

արդէն նշանակված էր «Մշակի» յօրեկանը: Իր ժամանակին հասարակական կարծիքը սաստիկ դատափետեց այդ անմաքուր շարժառիթը. հայկական տպագրութեան 400-ամեակը մի պատրուակ էր շինվում անմաքուր նպատակի համար: Սակայն «Հօրիգօնի» և Լէօի ջանքերը ապարդիւն անցան և մայիսին տօնելու միտքը ոչ մի համակրութիւն չը գտաւ:

Կ. Հ. Հրատ. Ընկ. այս տարվայ յունվարի 28-ին մի ժողով է գումարում 400-ամեակի յօրեկանը տօնելու խնդիրը քննելու համար: Այդ ժողովին մասնակցում են ի թիւս այլոց նաև «Մշակ» լրագրի, «Արօր» ամսագրի և Յովնանեան դպրոցի ներկայացուցիչները: Որովհետև այդ ժամանակ յայտնի հայ բանասէր Ստ. Մալխասեանցը հարց էր բարձրացրել հայկական տպագրութեան թւականը ճշդելու համար—մի գուտ գրական բանասիրական հարց—ուստի ժողովում առաջարկ է լինում ընտրել մի նախապատրաստական յանձնաժողով, որ պարզէ այդ հարցի քննութեամբ և ապա ճշդվելուց յետոյ զբաղվել յօրեկանի տօնախմբութեան հարցով: Որովհետև ժողովի մեծամասնութիւնը չէ ընդունում այդ առաջարկը, «Մշակի», «Արօրի» և Յովնանեան դպրոցի ներկայացուցիչները հեռանում են ժողովից և այնուհետև այլևս չեն մասնակցում երկրորդ ժողովին, փետրվարի 8-ին, ուր մի խումբ անձինք, աւելի սակաւաթիւ քան առաջին ժողովը, ընտրում են տնավարի կերպով գուտ կուսակցական թայֆայական մի յանձնաժողով, որ կոչում է իրան «Թիֆլիսի Յօրեկան» Թանձախումբը:

Սակայն այդ իսկ միջոցին մամուլի մէջ, թէ անղական և թէ արտասահմանեան, միտք է յայտնվում, թէ 400-ամեակին աւելի լաւ է միացնել և հայկական գրերի գիւտի 1500-ամեակը և այդ երկու մեծ տարեդարձները դարձնել մի մեծ համազգային տօնախմբութիւն, կատարելով տօնը Էջմիածնում, որ, մեր հայ ազգի ներկայ պայմաններում, միակ ձեռնհասն է գրաւելու դէպի իրան զանազան երկիրների հայութիւնը և համախմբելու համազգային մի տօնի շուրջը: Այդ միտքը արձագանք է կտնում, և Էջմիածնի ճեմարանի մանկավարժական խորհուրդը, փետրվարի 21-ին իր խորհրդակցութեան նիւթ դարձնելով, ցանկալի է համարում, որ Էջմիածինը նախաձեռնող հանդիսանայ, և միացնելով տպագրութեան 400-ամեակի հետ նաև տառերի գիւտի 1500-ամեակը, տօնել իբրև մի մեծ համազգային տօն Էջմիածնում, հոկտեմբերի 13-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատուաւոր նախագահութեան ներքոյ: Այս ծրագիրը հաւանութիւն գտնելով Կաթողիկոսի կողմից՝ հաստատվում է կօնզակով. միևնոյն ժամանակ որոշվում է ազգային այդ երկու պատմական մեծ դէպքերի յօրեկանը յաւերժացնելու համար հիմնել մի ընդհանուր, համազգային դպրոցական ֆօնդ, որի ժողովարարութեան համար և ստանալ թոյլտուութիւն բարձր իշխանութիւնից:

Էջմիածնի այս որոշումը զալիս էր լուծելու այն հարցը, թէ ինչպէս անել, որ այդ մեծ տօնախմբութիւնը չը կրի կուսակցական, թայֆայական բնաւորութիւն և դառնայ համազգային, համահայկական: Մեր ներկայ պայմաններում, կուսակցական այն ահագին պառակտումներով, որ գոյութիւն

ունի մեր մէջ, միակ հաստատութիւնը, ոչ իբրև կրօնական, այլ իբրև ընդհանուր ազգային, որ կարող է միացնել, համախմբել զանազան երկիրների հայութիւնը և կուսակցութիւնները, միակ վայրը, ուր կարող են գալ և մասնակցել ամեն կողմից հայութեան ներկայացուցչները, է էջմիածինը, որի կողքին է գտնվում և հայկական գրքերի գործը ս. Մեսրոպի դամբարանը: Իսկ մի ընդհանուր դպրոցական ֆունդի ստեղծումը ամենալաւ և ամենախելացի սկստն է, որով կարելի է յաւերժացնել համազգային մեծ տօնը: Ներկայումս ըովանդակ հայութեան համար ոչ մի կարիք այնքան անյետաձգելի չէ, որքան դպրոցների կարիքը, իսկ դրպրոցներ ստեղծելու համար անհրաժեշտ է ֆունդ. ֆունդ ստեղծելու համար պէտք է ունենալ մեծ գումար, բայց մեծ գումար ստանալու համար պէտք է լինի մի մնայուն, մի համազգային ճանաչված վստահելի հաստատութիւն, որին կարելի լինի հաւատալ: Ռուսահայերի համար զոնէ այդպիսի մի հաստատութիւնը մեր ներկայ պայմաններում էջմիածնի սինօդն է, իբրև կօլլեգիալ և կօնսորի ենթակայ հաստատութիւն: Նոյն սինօդին ամենայն վստահութեամբ կարելի է հաւատալ և տալ պահպանութիւն և դպրոցական ֆունդի այն մասերը, որոնք յատկացված կը լինեն Թիւրքիայի և Պարսկաստանի հայ դպրոցների համար, ինչպէս արդէն նա ունի մի երկու գումարներ Թիւրքիայի հայ դպրոցների համար:

Ճիշդ է, եղել են և այլ առաջարկներ, որինակ զրական ֆունդի առաջարկը, գրաշարներին ապահովելու առաջարկը, հայագիտական հրատարակութիւններ անելու առաջարկը և այլն: Գրական ֆունդի առաջարկի առաջին հեղինակը եղել էմ ես ինքս Կ. Ղ. Բ. Ընկ. ժողովում: Սակայն երբ էջմիածինը կանգ առաւ դպրոցական ֆունդի վրա, այլ ևս հակառակելը ոչ մի միտք և նշանակութիւն չունէր: Եւ եթէ շատ լաւ մտածելու լինենք, զրական ֆունդը աւելի սահմանափակ, աւելի մասնաւոր գաղափար է, քան համազգային դպրոցական ֆունդը: Գրական ֆունդից, եթէ նա իրագործվի, վերջ ի վերջոյ կօգտվեն սահմանափակ թուով մարդիկ, մինչ դպրոցական ֆունդից կօգտվի ամբողջ հայ ժողովուրդը:

Վերջապէս կայ և պատմական մի խոշոր հանգամանք, որ էջմիածնին առանձին կարևորութիւն է տալիս և ստիպում է մեզ նախապատուութիւնը երկու նշանաւոր տօնախմբութիւնների մէջ տալ էջմիածնին: Հայ գրքերի գիւտի հեղինակը հայոց եկեղեցու մի վարդապետ է՝ ս. Մեսրոպը, իսկ նրա աջակիցը՝ հայ եկեղեցու մի պետ, մի հայրապետ՝ ս. Սահակը: Ուրեմն էջմիածինը գիտաւոր դեր ունի խաղացած պատմական այդ նշանաւոր դէպքի մէջ: Նոյնպիսի նշանաւոր դեր խաղացել է էջմիածինը և հայկական տպագրութեան գործի մէջ. յիշենք այն դիրքը, որ խաղաց Ռեկան վարդապետը Ամստերդամում. յիշենք էջմիածնի տպարանը, որ նոյնպէս անագին ծառայութիւններ մատուցեց հայ գրականութեան:

Թոււմ էր, թէ երբ էջմիածինը, վերջապէս, հասկացաւ կարևորութիւնը լինել նախաձեռնող ազգային երկու մեծ տօների կատարման, այլևս ոչ մի առարկութիւն ում և իցէ կողմից չը պէտք է լինէր, քա-

նի որ էջմիածնի նախաձեռնութիւնը և ակտիվ մասնակցութիւնը միայն կարող է տօնը համազգային, համահայկական դարձնել: Ազգային բոլոր մարմինները, կրթական, լուսաւորական, եկեղեցական հաստատութիւնները, հեռաւոր գաղութները աւելի մեծ պատրաստականութեամբ և հանդեով արձագանք կը տան Ամենայն Հայոց կաթողիկոսի հրաւերին և կը մասնակցեն էջմիածնում կատարվելիք տօնախմբութեան, քան Թիֆլիսի մի մասնաւոր, ոչ մի հեղինակութիւն չունեցող յաւանախմբի, բաղկացած ըստ մեծի մասին այնպիսի անդամներից, որոնք ոչ մի կապ և առնչութիւն չունեն հայ գրականութեան, հայ բանասիրութեան հետ: Վերջապէս, դժուար թէ այդպիսի մի անյայտ, անհեղինակաւոր յանձնախմբի հայ ժողովուրդը հաւատար իր գումարները, աչքի առաջ ունենալով «Հայրիկեան ֆունդին» հասած շարաքաղութիւնը:

Թիֆլիսի Յանձնախմբին, որ ընտրված էր մասնաւոր, նեղ շրջանում, անավարի և ունի աւելի թայֆայական, նեղ կուսակցական բնաւորութիւն, մնում էր ուրախանալ, որ էջմիածինը նախաձեռնութիւն է յանձն առել կազմակերպելու համազգային տօնը, ինչպէս ամենքի ցանկութիւնն էր, և շտապել առաջարկել էջմիածնի Յանձնաժողովին իր աջակցութիւնը և ծառայութիւնը, կամ շատ-շատ՝ մնալ տեղական յանձնախմբի, տօնելու համար հոկտ. 13-ին Թիֆլիսում ևս յօրեկանը:

Բայց էջմիածնի փառասիրութիւնը չը կամեցաւ հաշտվել այդ մտքի հետ: Նա՛ այդ աղայամիտ փառասիրութիւնը երազում էր խաղալ նախագահի դեր, արժանանալ մեծարանքի և անա յանկարծ էջմիածնի որոշումը գալիս է խափանելու այդ քաղցր երազը:

Ուստի և անզուսպ փառասիրութեան յագուրդ տալու համար էջմի կանգ չէ առնում նոյնիսկ կաթողիկոսին մեղադրել անըացատրելի անուշադիր վերաբերմունքի, անտրամաբան վարմունքի և Թիֆլիսի Յանձնախումբը վիրատրելու զգտման մէջ: Եւ իր անկօրրեկտ վարմունքը մի կերպ արգարացնելու համար, նա դիմում է ուղղակի փաստերի և իրողութիւնների կեղծման, ճարպիկ լարախաղացութեան, որոնք կարող են մի րօպէ մոդրնիստ և հասարակութիւնը և ընթերցողներին, թէ, արդարև, Թիֆլիսի Յանձնախումբը ընտրված է նաև «Մշակի», «Արթրի», Յովնանեանի դպրոցի կողմից. թէ, արդարև, ինքը Թիֆլիսի անզուգական Յանձնախումբը ցանկանում է տօնախմբութիւնը համազգային, համահայկական դարձնել, բայց խանգարողը էջմիածինն է և Ամենայն Հայոց կաթողիկոսը իր անըացատրելի անուշադիր վերաբերմունքով, անտրամաբան վարմունքով և վիրատրելու ճրգտումով. թէ, արդարև, էջմիածինը և կաթողիկոսն են մեղաւոր, որ պատակովում է հայ տպագրութեան 400-ամեայ յօրեկանական մեծ տօնը. թէ իբր Կ. Պօլիսը պաշտօնապէս ընդունել է նոյնաբերի 26-ին տօնելու առաջարկը, այսինքն Թիֆլիսի Յանձնախմբին միանալու առաջարկը և ոչ էջմիածնին. թէ իբր Եփրեմ եպիսկոպոսը, որ Թիֆլիսի Յանձնախմբի պատուաւոր նախագահը կամ անդամն է, նոյնպէս համաձայն է այդ ամենի հետ: Եւ դրա հետ միասին անզուգական Յանձնախումբը պատանալիք է

կարգում, որ յօբելեանը անպատճառ կը
տօնվի թիֆլիսում նոյեմբերի 26-ին, ուրեմն
դու, էջմիածին, այլ ևս մի համարձակիր
պնդել քո որոշման վրա:

Ահա որտեղ են հասնում Հէօի և ընկեր-
ների յոխորտանքները, խարդախութիւն-
ները, որոնց փաստերը կը բերենք հետևեալ
անգամ:

Հ. Ա.